

**Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության «Grassroots»
ծրագրերի» համար ՖՏ 2019.**

**«Շարժական կլինիկայի համար նախատեսված մեքենայի տրամադրում՝ համայնքներում
վերարտադրողական առողջության օնկոլոգիական հիվանդությունների կանխարգելման և
հոգեկան առողջության բարելավման համար» ծրագրի ստորագրման արարողությունը**

2019 թ. դեկտեմբերի 13-ին, ՀՀ առողջապահության նախարարությունում տեղի ունեցավ «Շարժական կլինիկայի համար նախատեսված մեքենայի տրամադրում՝ համայնքներում վերարտադրողական առողջության օնկոլոգիական հիվանդությունների կանխարգելման և հոգեկան առողջության բարելավման համար» ծրագրի 29,917 ԱՄՆ դոլար արժողությամբ դրամաշնորհային պայմանագրի ստորագրման արարողությունը՝ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում: Դրամաշնորհային պայմանագիրը ստորագրվեց ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան պարոն Ջուն Յամադայի և «Մեփլ Լիֆս» հայ-կանադական բժշկական կլինիկայի գործադիր տնօրեն, պարոն Յուրի Ավագյանի կողմից: Ստորագրման արարողությունը տեղի ունեցավ ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Անահիտ Ավանեսյանի, «Մեփլ Լիֆս» հայ-կանադական բժշկական կլինիկայի բժշկական ղեկավար, դոկտոր Վարդգես Ավագյանի և շատ ուրիշների ներկայությամբ:

Ծրագրի նպատակն է բժշկական օգնություն ցուցաբերել գյուղական 21 համայնքերի, մասնավորապես Արմավիրի, Արարատի, Գեղարքունիքի, Կոտայքի և Ծիրակի մարզերի աղքատ և սոցիալապես խոցելի բնակչությանը:

Շարժական կլինիկայի մեքենայի տրամադրումը հնարավորություն կընձեռնի ստեղծելու շարժական բժշկական թիմ, որը կրթական և մեթոդաբանական աջակցություն կցուցաբերի համայնքերի ամբուլատորիաների առաջնային բուժօգնության բժշկական անձնակազմին, ինչպես նաև առողջապահության բնագավառի կամավորներին՝ այսպիսով բարելավվելով թիրախային կլինիկաների բուժանձնակազմի շարունակական մասնագիտական վերապատրաստումը: Երկարաժամկետ հեռանկարում այս ծրագրի շրջանակներում աջակցություն կստանան վերարտադրողական առողջության օնկոլոգիական հիվանդություններով և հոգեկան խնդիրներով տառապող հազարավոր մարդիկ: Անհրաժեշտության դեպքում, հիվանդները կհրավիրվեն Երևան՝ «Մեփլ Լիֆս» կլինիկա՝ հետագա բուժզննում և լրացուցիչ հետազոտություն անցնելու նպատակով:

Ջերմորեն ողջունելով բոլոր հյուրերին և շնորհավորելով «Մեփլ Լիֆս» կլինիկայի ներկայացուցիչներին դրամաշնորհային պայմանագրի ստորագրման առթիվ՝ առողջապահության նախարարի տեղակալ Անահիտ Ավանեսյանը նշեց, որ ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանությանը երկար տարիներ շարունակ համագործակցել և աջակցել է նախարարությանը:

Իր հերթին դեսպան Յամադան ավելացրեց, որ առողջությունը կենսական նշանակություն ունի երկրի զարգացման գործում և այս կապակցությամբ կարևորեց Ճապոնիայի շարունակական աջակցությունը մարդկային առողջության պահպանման գործում:

Իրենց հերթին «Մեփլ Լիֆս» կլինիկայի ներկայացուցիչները ևս մեկ անգամ շնորհակալություն հայտնեցին դեսպան Յամադային նման բացառիկ հնարավորության և ՀՀ առողջապահական համակարգում Ճապոնիայի ներգրավվածության համար:



Դեպան Յամադան և «Մեփլ Լիֆա» կլինիկայի տնօրեն Յուրի Ավագյանը ստորագրում են դրամաշնորհի պայմանագիրը



ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Անահիտ Ավանեսյանի ողջույնի խոսքը



Դեպան Յամադայի շնորհավորական ուղերձը



«Մեփլ Լիֆա» կլինիկայի բժշկական ղեկավար, դոկտոր Վարդգես Ավագյանի երախտագիտության խոսքը